

**«Գրանցված է»**  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
9 ապրիլի 2010 թ.  
Պետական գրանցման թիվ 60210157

## ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

12 մարտի 2010 թ.

N 2-Ն

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԵՌՈՒՍԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(վերնագիրը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

**(նախաբանը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

Հաստատել Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

**(որոշումը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

Նախագահ

Գ. Ամալյան

Հավելված  
Հեռուստատեսության և ռադիոյի  
ազգային հանձնաժողովի  
2010 թվականի մարտի 12-ի  
N 2-Ն որոշման

#### ՀԵՌՈՒՍԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ

**(վերնագիրը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

Կ Ա Ր Գ

1. Սույն կարգը սահմանում է հեռուստառադիոընկերությունների կողմից հաշվառման մատյանում իրենց կողմից հեռարձակված հեռուստառադիոհաղորդումների գրանցման, հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի տվյալները Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացնելու կանոնները, ինչպես նաև հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի ձևը (Ձև 1):

**(1-ին կետը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

2. **(կետն ուժը կորցրել է 04.04.19 թիվ 34-Ն)**

3. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի վարումը և պահպանումն իրականացնում է հեռուստառադիոընկերության ղեկավարի կողմից նշանակված պատասխանատու անձը:

4. Պատասխանատու անձի տվյալները հեռուստառադիոընկերությունը ներկայացնում է Հանձնաժողով:

5. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի էջերը համարակալվում են, կարվում և հաստատվում են հեռուստառադիոընկերության կողմից «Բաղկացած ----- թերթից» գրառմամբ և ստորագրությամբ: Մատյանի շապիկի վրա նշվում են հետևյալ տեղեկությունները՝ հեռուստառադիոընկերության լրիվ անվանումը, սփռման տարածքը, մատյանի հերթական համարը, մատյանի վարումը սկսելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, էջերի քանակը, մատյանի վարումը ավարտելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

**(5-րդ կետը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)**

6. Պատասխանատու անձը հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակված յուրաքանչյուր հաղորդում նույն օրը գրանցում է հաշվառման մատյանում՝ նշելով հաղորդման անվանումը, հեռարձակման ամիսը, ամսաթիվը, հաղորդման սկզբի և ավարտի ժամը (րոպեների և վայրկյանների ճշտությամբ), համառոտ բովանդակությունը, հեռուստառադիոհաղորդման հեղինակ(ներ)ի և հեռարձակողի անունը, ազգանունը:

7. Յուրաքանչյուր օրվա հեռարձակված հաղորդումների մասին տեղեկությունները գրանցվում են նոր էջից:

8. Եթե հեռուստառադիոընկերությունը հեռուստառադիոհաղորդումներ է հեռարձակում մեկից ավելի բնակավայրերում և այդ բնակավայրերում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումները տարբեր են, ապա յուրաքանչյուր հեռուստառադիոհաղորդման համար վարում է հեռուստառադիոհաղորդումների հաշվառման առանձին մատյան:

9. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման վերաբերյալ գրանցումները միաժամանակ կատարվում են նաև էլեկտրոնային տարբերակով:

10. Հեռուստառադիոընկերությունը հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի յուրաքանչյուր ամսվա առաջին կեսի տվյալները էլեկտրոնային տարբերակով՝ Հանձնաժողովի կողմից տրամադրված էլեկտրոնային ծրագրային ապահովմամբ, Հանձնաժողով է ներկայացնում մինչև տվյալ ամսվա 20-ը, իսկ երկրորդ կեսի տվյալները՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը: Ամբողջ ամսվա տվյալները գրավոր նամակով ամիսը մեկ անգամ ներկայացնում է Հանձնաժողով՝ մինչև հաջորդ ամսվա 5-ը:

11. Հեռուստառադիոընկերության ներկայացրած հաշվառման մատյանի տվյալների և Հանձնաժողովի իրականացրած ուղղակի դիտարկումների տվյալների անհամապատասխանության դեպքում, Հանձնաժողովի գրավոր պահանջի հիման վրա, հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եռօրյա ժամկետում ներկայացնել գրավոր բացատրություն: Եթե հեռուստառադիոընկերության ներկայացրած հաշվառման մատյանի գրավոր և էլեկտրոնային տարբերակների միջև կա անհամապատասխանություն, հիմք է ընդունվում գրավոր տարբերակը:

12. Սույն որոշման դրույթները չեն տարածվում այն հեռուստառադիոընկերությունների վրա, որոնք իրականացնում են հեռուստառադիոհաղորդումների ամբողջական և անփոփոխ, այդ թվում՝ առանց գովազդ տեղադրելու իրավունքի վերահեռարձակում: Այն հեռուստառադիոընկերությունները, որոնք իրենց կողմից վերահեռարձակվող հեռուստառադիոհաղորդումներում տեղադրում են գովազդ կամ այլ հաղորդում, դրանց վերաբերյալ հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում կատարում են գրանցումներ՝ համաձայն Ձև 1-ի:

13. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում գրանցումները թերի կատարելու կամ հաշվառման մատյանի տվյալները ժամանակին Հանձնաժողով չներկայացնելու դեպքում հեռուստառադիոընկերությունը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ձև 1**

Ամսաթիվ, ամիս, տարեթիվ

Հ/հ	Հաղորդման անվանումը	Սկիզբը	Ավարտը	Համառոտ բովանդակությունը	Հեղինակի անունը, ազգանունը	Հեռարձակողի անունը, ազգանունը
1	2	3	4	5	6	7

Հեռարձակող (պաշտոնը)

ստորագրություն

անուն, ազգանուն

Պատասխանատու անձ

ստորագրություն

անուն, ազգանուն

**Հաշվառման մատյանը վարելու ուղեցույց**

1-ին սյունակում լրացվում է յուրաքանչյուր հաղորդման հերթական համարը:

2-րդ սյունակում լրացվում է հաղորդման (ֆիլմի) անվանումը, անոնսով, հայտարարությամբ, պաշտոնական հաղորդագրությամբ, գովազդով ընդհատումների դեպքում համապատասխանաբար նշվում է «անոնս», «հայտարարություն», «պաշտոնական հաղորդագրություն», «գովազդ» կամ «սոցիալական գովազդ»: Ընդ որում, հաղորդման ընդհատումների մասին նշումները կատարվում են հաղորդման մասին բոլոր տվյալները գրանցելուց հետո: Նախընտրական քարոզչական հաղորդում հեռարձակելու դեպքում կատարվում է «նախընտրական քարոզչական հաղորդում» նշումը: Եթե տվյալ օրը հեռուստառադիոընկերությունում եղել է պրոֆիլակտիկա կամ տեխնիկական պատճառներով անջատում, ապա համապատասխանաբար կատարվում է «պրոֆիլակտիկա» կամ «տեխնիկական անջատում» նշումը:

3-րդ սյունակում լրացվում է հաղորդման կամ հաղորդման ընդհատումների (գովազդ, անոնս և այլն) հեռարձակման սկիզբը՝ րոպեների և վայրկյանների ճշտությամբ:

4-րդ սյունակում լրացվում է հաղորդման կամ հաղորդման ընդհատումների հեռարձակման ավարտը՝ րոպեների և վայրկյանների ճշտությամբ:

5-րդ սյունակում լրացվում է հաղորդման թեմատիկան և առարկան, օրինակ՝ մարզական լրատվական թողարկում, թոք-շոու երիտասարդությանն առնչվող խնդիրների վերաբերյալ, կենդանիների մասին գիտահանրամատչելի հաղորդում, եթե գեղարվեստական ֆիլմ է, ապա նշվում է ֆիլմի ժանրը (մելոդրամա, կատակերգություն, արկածային, էրոտիկա, սարսափ և այլն) և արտադրողի կողմից արված դասակարգումը (G, PG-13, R և այլն): Նախընտրական

քարոզչական հաղորդման դեպքում նշվում է ընտրություններին մասնակցող թեկնածուի անունը, կուսակցության և կուսակցության դաշինքի անվանումը:

6-րդ սյունակում ոչ սեփական արտադրության հաղորդումների դեպքում նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և հեղինակի անունը, ազգանունը: Սեփական արտադրության հաղորդումների դեպքում նշվում է հաղորդման հեղինակի անունը, ազգանունը: Սեփական արտադրության հաղորդումների համար կատարվում է «Ս» նշումը, հայրենական արտադրության հաղորդումների համար կատարվում է «Հ» նշումը:

7-րդ սյունակում լրացվում է եթերի պատասխանատուի (եթերի թողարկիչ կամ նույն գործառույթներ իրականացնող այլ աշխատակից) անունը և ազգանունը: Եթե տվյալ հեռուստառադիոընկերությունում եթերի պատասխանատուները մեկ եթերային օրվա ընթացքում հերթափոխվում են, ապա նշվում է բոլորի անունները և ազգանունները:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման հաշվառման մատյանում ուղղումներ կամ ջնջումներ կատարելու դեպքում, տվյալ ուղղումը կամ ջնջումը պետք է վավերացվի հեռուստառադիոընկերության ղեկավարի, հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանը վարելու համար նշանակված պատասխանատու անձի ստորագրություններով:

Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանը ստորագրվում է տվյալ օրվա եթերի պատասխանատու(ներ)ի և մատյանը վարելու համար հեռուստառադիոընկերության ղեկավարի կողմից նշանակված պատասխանատու անձի կողմից:

***(հավելվածը փոփ. 04.04.19 թիվ 34-Ն)***